



# Social Security

Ինչպես  
Աշխատանքը Ազդում  
Է Ձեր Նպաստներին

2017թ.

[www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov)

# Ինչպես Աշխատանքը Ազդում Է Ձեր Նպաստներին

Դուք կարող եք ստանալ ծերության կամ վերակրողին կորցնելու կապակցությամբ Սոցիալական ապահովության նպաստներ եւ միեւնույն ժամանակ աշխատել: Սակայն, եթե դուք լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք եւ վաստակում եք որոշակի գումարներից ավելի, ձեր եկամուտները կրճատվելու են: Կարելի է նշել, որ նպաստների այդ կրճատումները իրապես չեն կորչում: Ձեր նպաստը բարձրացվելու է ձեր լրիվ կենսաթոշակային տարիքում հաշվի առնելով ավելի վաղ ստացված հասույթի հետեւանքով պահված նպաստները: (Կանայնք (ամուսիններ) եւ վերապրող ժառանգները, ովքեր ստանում են նպաստներ, քանի որ նրանք իրենց խնամքի տակ ունեն անչափահաս կամ հաշմանդամ երեխաներ, լրիվ կենսաթոշակային տարիքում չեն ստանում բարձրացված նպաստներ, եթե նպաստները պահվել են աշխատանքի պատճառով):

**ԾԱՆՈՒՑՈՒՄ. Եթե դուք ստանում եք սոցիալական ապահովության հաշմանդամության կամ Լրացուցիչ սոցիալական եկամուտի (SSI) վճարումներ, ապա ձեր նկատմամբ կիրառվում են տարբեր կանոններ: Ուստի դուք պետք է ամբողջ հասույթի մասին տեղեկատվությունը ներկայացնեք Սոցիալական ապահովությանը: Միեւնույն ժամանակ, տարբեր կանոններ են կիրառվում եթե դուք աշխատում եք Միացյալ Նահանգներից դուրս: Դիմե՛ք մեզ, եթե դուք աշխատում եք (կամ նախատեսում եք աշխատել) երկրից դուրս:**

## **Դուք որքա՞ն կարող եք վաստակել եւ տակաւին ստանալ նպաստներ**

**Եթե ծնվել եք 1955թ. հունվարի 2-ից մինչև 1956թ.** հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածում, ապա ձեր լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքը՝ կենսաթոշակային ապահովագրության նպաստներ ստանալու համար, հանդիսանում է 66 տարի և 2 ամիսը: Եթե աշխատում եք և գտնվում եք լրիվ կենսաթոշակային տարիքում կամ ավելի մեծ եք, ապա ձեր բոլոր նպաստները կպահպանվեն՝ անկախ նրանից, թե որքան եք վաստակում: Եթե լրիվ կենսաթոշակային տարիքից երիտասարդ եք, ապա գոյություն ունի սահմանափակում, թե որքան կարող եք վաստակել և շարունակել ամբողջությամբ ստանալ սոցիալական ապահովության նպաստները: Եթե ողջ 2017 թվականի ընթացքում չի լրանում ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը, ապա 16.920 դոլարից ավել ստացված յուրաքանչյուր 2 դոլարի համար ձեր նպաստներից կպահվի 1 դոլար:

**Եթե ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրանում է 2017թ.-ի** ընթացքում, ապա 44.880 դոլարից ավել ստացված յուրաքանչյուր 3 դոլարի համար ձեր նպաստներից կպահվի 1 դոլար՝ մինչև ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրանալու ամիսը:

## **Այս օրինակները ցույց են տալիս, թե այս կանոնները ինչպես ազդում են ձեզ՝**

Ենթադրենք՝ դուք սոցիալական ապահովության նպաստների համար դիմել եք 62 տարեկանում 2017թ. հունվարին, և ձեզ նպաստ է սահմանվել ամսական 600 դոլարի չափով (տարեկան 7.200 դոլար): 2017թ.-ի

ընթացքում ծրագրում եք աշխատել և վաստակել 22.000 դոլար (որը 5.080 դոլարով բարձր է 16.920 դոլարի սահմանափառից): Ձեր սոցիալական ապահովության նպաստից կպահվի 2.540 դոլար (1 դոլար՝ սահմանաչափից ավելի վաստակած յուրաքանչյուր 2 դոլարի դիմաց): Այդ նպատակով ձեր նպաստի բոլոր վճարումները կպահվեն 2017թ. հունվարից մինչև 2017թ. մայիսն ընկած ժամանակահատվածում: Սկսած 2017թ. հունիսից՝ դուք կստանաք ձեր 600 դոլարի նպաստը, և այդ գումարը ձեզ կվճարվի յուրաքանչյուր ամիս՝ մինչև տարվա վերջ: 2018թ.-ին ձեզ կվճարվի 2017թ. մայիսին պահված հավելյալ 460 դոլարը:

Կամ ենթադրենք՝ ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը չի լրանում տարվա սկզբին, այլ 2017թ. նոյեմբերին: Հունվարից մինչև հոկտեմբեր ընկած 10 ամիսների ընթացքում վաստակել եք 45.900 դոլար: Այդ ժամանակահատվածում ձեզնից կպահվի 340 դոլար (1 դոլար՝ 44.880 դոլարի սահմանաչափից ավելի վաստակած յուրաքանչյուր 3 դոլարի դիմաց): Այդ նպատակով կպահվի տարվա ձեր առաջին վճարագիրը: Սկսած 2017թ. փետրվարից՝ դուք կստանաք ձեր 600 դոլարին համարժեք նպաստը, և այդ գումարը ձեզ կվճարվի յուրաքանչյուր ամիս՝ մինչև տարվա վերջ: 2018թ.-ին ձեզ կվճարվի մնացած 260 դոլարը, որը պահվել էր 2017թ. հունվարին:

## **Ձեր հասույթը եւ ձեր նպաստները՝ որքան դուք ստանալու եք**

Հետեւյալ աղյուսակը գաղափար է տալիս ձեզ թե որքան նպաստ կարող եք ստանալ 2017թ.-ի թվականում ձեր ամսական նպաստների եւ հասույթի արժեքների համեմատ.

**Ամբողջ տարվա ընթացքում լրիվ կենսաթոշակի անցնելու տարիքից երիտասարդ եղող մարդկանց համար**

<b>Եթե ձեր ամսական Սոցիալական Ապահովության նպաստն է</b>	<b>Իսկ դուք վաստակում եք</b>	<b>ձեր տարեկան նպաստը կը լինի</b>
\$700	\$16.920 կամ նվազ	\$8.400
\$700	\$18.000	\$7.860
\$700	\$20.000	\$6.860
\$900	\$16.920 կամ նվազ	\$10.800
\$900	\$18.000	\$10.260
\$900	\$20.000	\$9.260
\$1.100	\$16.920 կամ նվազ	\$13.200
\$1.100	\$18.000	\$12.660
\$1.100	\$20.000	\$11.660

**Ո՞ր եկամուտն է հաշվի առնվում... եւ մենք ե՞րբ ենք այն հաշվի առնում**

Եթե դուք աշխատում եք ուրիշի համար միայն ձեր աշխատավարձն է հաշվի առնվում Սոցիալական Ապահովության հասույթի սահմանային չափի նկատմամբ: Եթե դուք ինքնաշխատ եք, մենք միայն հաշվի ենք առնում ինքնաշխատությունից առաջացած ձեր զուտ հասույթը: Մենք հաշվի չենք առնում որոշ եկամուտներ, օրինակ՝ պետական նպաստը, ներդրումային գործունեությունից ստացված եկամուտները, կենսաթոշակային վճարումները, ամենամյա վճարումները և կապիտալի աճից ստացված եկամուտները, սակայն

հաշվի ենք առնում աշխատողի մուծումները կենսաթոշակային պլան, եթե այդ մուծումները ներառված են աշխատողի անվանական աշխատավարձում:

Եթե դուք աշխատում եք աշխատավարձով, ձեր եկամուտը հաշվի է առնվում այն վաստակելու պահում եւ ոչ վճարման ժամանակ: Եթե դուք ստանաք եկամուտ այս տարի այն աշխատանքի համար որ կատարել էիք անցյալ տարում, այս եկամուտը իբր հասույթ չհաշվվում այս տարվա համար: Օրինակներ են հաւաքված հիվանդության կամ արձակուրդի վարձատրություններ եւ պարգեւաբաշխումներ:

Եթե դուք ինքնաշխատ եք, ձեր եկամուտը հաշվի է առնվում այն ստանալու (վճարվելու) պահում եւ ոչ այն վաստակելու ժամանակ, բացի այդ դեպքում երբ վճարվում եք Սոցիալական Ապահովության կենսաթոշակի իրավասու լինելուց ետք, այն աշխատանքի համար որ կատարած էիք նախքան կենսաթոշակի իրավասու լինելը:

## **Հատուկ կանոն կենսաթոշակի անցնելու ձեր առաջին տարվա համար**

Երբեմն այն անձինք, ովքեր կենսաթոշակի են անցնում տարվա կեսին, արդեն իսկ վաստակած են լինում տարեկան հասույթի սահմանաչափից ավել գումար: Այդ նպատակով առկա է հատուկ կանոն, որը կիրառելի է մեկ տարվա՝ սովորաբար առաջին կենսաթոշակային տարվա, հասույթի նկատմամբ: Այս կանոնի համաձայն՝ դուք կարող եք սոցիալական ապահովության նպաստ ստանալ այն ամբողջ ամսվա համար, որում կենսաթոշակի եք անցել՝ անկախ ձեր տարեկան հասույթից:

Ողջ 2017թ.-ի ընթացքում լրիվ կենսաթոշակային տարիքը չլրացած անձը համարվում է կենսաթոշակառու, եթե ամսական հասույթը կազմում է 1.410 դոլար կամ պակաս:

Օրինակ՝ Ջոն Սմիթը թոշակի է անցնում 62 տարեկանում՝ 2017թ. հոկտեմբերի 30-ին: Մինչև հոկտեմբեր նա կվաստակի 45.000 դոլար: Նոյեմբերի սկզբին նա կես դրույքով աշխատանքի է անցնում վաստակելով ամսական 500 դոլար: Չնայած նրա հասույթը տարվա կտրվածքով զգալիորեն գերազանցում է 2017թ.-ի տարեկան սահմանաչափը (16.920 դոլար), նա կստանա սոցիալական ապահովության վճարում նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համար: Դա հիմնավորվում է նրանով, որ նրա հասույթը այդ ամիսների ընթացքում կազմում է 1.410 դոլար կամ պակաս՝ լրիվ կենսաթոշակային տարիքից ցածր անձանց համար նախատեսված ամսական սահմանաչափը: Եթե պրն. Սմիթը նոյեմբեր կամ դեկտեմբեր ամսին վաստակի 1.410 դոլարից ավելի, ապա նա նպաստ չի ստանա տվյալ ամսվա համար: Սկսած 2018թ.-ից՝ նրա նկատմամբ կկիրառվի միայն տարեկան սահմանաչափը:

Եթե դուք սեփական գործով եք զբաղվում, ապա մենք հաշվի ենք առնում ձեր կատարած աշխատանքի ծավալը՝ որոշելու, թե արդյոք դուք կենսաթոշակառու եք: Դրա ձևերից մեկը աշխատանքի վրա ծախսված ձեր ժամանակի գնահատումն է: Ընդհանուր առմամբ, եթե սեփական գործով զբաղվող անձը ամսական աշխատում է 45 ժամից ավելի, ապա նա չի համարվում կենսաթոշակառու, սակայն 15 ժամից պակաս աշխատելու դեպքում համարվում է կենսաթոշակառու: Եթե աշխատում եք ամսական 15-ից մինչև 45 ժամ, ապա դուք չեք համարվի կենսաթոշակառու, եթե կատարում եք այնպիսի աշխատանք, որը մեծ հմտություններ է պահանջում կամ դուք դեկավարում եք խոշոր ձեռնարկություն:

## **Ձեր հասույթովի փոփոխությունները մեզ տեղեկացրեք**

Մենք որոշում ենք ձեր 2017 թվականի Սոցիալական Ապահովության նպաստների գումարը ձեր տրամադրած հասույթի տեղեկության համեմատ: Ամսօրյապես մեզ տեղեկացրեք եթե դուք կարծում եք որ ձեր 2017 թվականի հասույթը տարբերվու է նախապես մեզ ներկայացված գումարից:

Եթե ձեր աշխատանքի հիման վրա ընտանիքի այլ անդամներ ստանում են նպաստներ, ձեր հասույթը, որ դուք ստանում եք կենսաթոշակի անցնելուց ետք, կարող է կրճատել նաեւ նրանց նպաստները: Սակայն, նոյն ընտանիքի անդամների հասույթը ազդում է միայն նրանց նպաստներին:

Մեզ դիմեք եթե հարցեր ունեք ձեր հասույթը հաշվարկելու նկատմամբ: Խնդրում ենք որ երբ զանգահարեք ձեզ մոտ ունենաք ձեր Սոցիալական Ապահովության համարը:

## **Արդյո՞ք դուք ստանալու եք ավելի բարձր ամսական նպաստներ, եթե նպաստները պահվում են աշխատանքի պատճառով**

Այո: Եթե ձեր կենսաթոշակային նպաստների մի մասը պահվում է ձեր հասույթի պատճառով, ապա ձեր ամսական նպաստը կավելանա ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո՝ հաշվի առնելով այն ամիսները, որոնցում նպաստները պահվել են:

Օրինակ՝ ենթադրենք դուք կենսաթոշակային նպաստների համար դիմում եք ձեր 62 տարեկանը լրանալուց հետո՝ 2017թ.-ին, և ձեր վարձատրությունը կազմում է ամսական 964 դոլար: Այնուհետև կրկին աշխատանքի եք անցնում, և ձեր 12 ամսվա նպաստները պահվում են:



Մենք կվերահաշվարկենք ձեր նպաստը ձեր լրիվ կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո՝ 66 տարի և 2 ամսում, և կվճարենք ամսական 1.029 (հաշվված այսօրվա դոլարի արժեքով): Կամ էլ, հնարավոր է, որ 62-ից մինչև 66 տարի և 2 ամիսն ընկած ժամանակահատվածում վաստակում եք այնքան, որ այդ տարիների բոլոր նպաստները պահվում են: Այդ դեպքում, ձեր 66 տարի և 2 ամիս տարիքը լրանալուց հետո ձեր կվճարվի ամսական 1.300 դոլար:

## Արդյո՞ք ձեր աւելորդ հասույթը կբարձրացնի ձեր նպաստները

Այո: Յուրաքանչյուր տարի մենք վերանայում ենք հաշվառման փաստաթղթերը Սոցիալական ապահովություն ստացողների համար, ովքեր աշխատում են: Եթե հասույթի ձեր ամենավերջին տարին ստացվում է որպես ձեր ամենաբարձր տարիներից մեկը, ապա մենք վերահաշվում ենք ձեր նպաստը եւ վճարում հասանելիք բարձրացումը: Սա ինքնաբերական գործընթաց է, և վճարումները սովորաբար կատարվում են հաջորդ տարվա դեկտեմբերին: Օրինակ՝ 2017թ. դեկտեմբերին դուք ձեր 2016թ. եկամուտների հավելում կստանաք, եթե այդ եկամուտներն ավելացրել են ձեր նպաստը: Այդ բարձրացումը կունենա հետադարձ ուժ՝ 2017թ. հունվարի նկատմամբ:

## Կապ Հաստատել Սոցիալական Ապահովության Ծառայության հետ՝

Ցանկացած պահին այցելեք **[www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov)** կայքը, բացեք **my Social Security** Ձեր անձնական հաշիվը՝ նպաստ ստանալու համար, գտեք հրատարակություններ, ինչպես նաև պատասխաններ ստացեք հաճախ տրվող հարցերին: Կամ զանգահարեք մեզ մեր անվճար հեռախոսահամարով՝ **1-800-772-1213** (լսողության խնդիրների դեպքում, զանգահարեք մեր TTY հեռախոսահամարով՝ **1-800-325-0778**):

Մենք տրամադրում ենք անվճար թարգմանչական ծառայություն, որպեսզի օգնենք Ձեզ վարել Ձեր Սոցիալական ապահովության գործընթացները: Տվյալ թարգմանչական ծառայությունները հասանելի են՝ անկախ նրանից, թե Դուք դիմել եք մեզ հեռախոսով, թե այցելել եք Սոցիալական ապահովության գրասենյակ: Մենք կպատասխանենք Ձեր անձնական հարցերին Երկուշաբթիից Ուրբաթ ժամը առավոտյան 07:00-ից մինչև երեկոյան 19:00-ը: Սովորաբար կունենաք ավելի կարճ սպասելաժամանակ Երեքշաբթի օրվանից հետո զանգահարելու դեպքում: Մենք ապահովում ենք բոլոր զանգերի գաղտնիությունը: Մենք նաև ցանկանում ենք վստահ լինել, որ Դուք ստանում եք ճշգրիտ և սիրալիր ծառայություն, և այդ նպատակով երկրորդ Սոցիալական ապահովության ներկայացուցիչը վերահսկում է որոշ հեռախոսազանգեր: Մենք կարող ենք ընդհանուր տեղեկատվություն տրամադրել ավտոմատացված հեռախոսային ծառայության միջոցով՝ օրը 24 ժամ: Եվ հիշեք, որ մեր **[www.socialsecurity.gov](http://www.socialsecurity.gov)** կայքը հասանելի է Ձեզ համար ցանկացած պահին և ցանկացած վայրում:



## **Social Security Administration**

SSA Publication No. 05-10069-AM

How Work Affects Your Benefits (Armenian)

January 2017

*Produced and published at U.S. taxpayer expense*

*Կազմված և հրատարակված է ԱՄՆ հարկ վճարողների հաշվին:*